



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՅԱՆՎՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



Ս. ՂԵՆՈՆՂԵԱՆՑ ԵՒ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԵՒ ՅԱՏՈՎ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐԵՄՏԵԱՆ ՄԵՐ ԹԵՄԻՆ ՄԷՋ

Հայաստանեայց Առաքելական եկեղեցին Փետրուարի երկրորդ շաբթուան ընթացքին, 9ԷՆ 11 Փետրուարին, պիտի նշէ մեր եկեղեցական ու ազգային պատմութեան ամենէն նուիրական ու յիշատակելի տօներէն՝ Ս. Ղեւոնդեանց Բահանայից եւ Ս. Վարդանանց Չօրավարաց տօները:

Համաձայն մեր Թեմի ականությունաց, այս տօներուն առիթով տեղի պիտի ունենան Հոգեւորականաց Համագումար, ինչպէս նաեւ յատուկ արարողութիւններ:

Նկատի ունենալով, որ Ս. Ղեւոնդեանց տօնը տօնն է նաեւ Հայ Բահանային, Հոգեւորականաց Համագումարը յատկացուած է այս տօնին: Երեքշաբթի, 9 Փետրուարի առաւօտէն սկսեալ, Ազգային Առաջնորդարանին մէջ տեղի պիտի ունենայ միօրեայ համագումար, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ հիւրընկալութեամբ Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ: Համագումարը պիտի սկսի առաւօտեան աղօթքի պահով մը, Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան մէջ: Ապա, իրերայաջորդ նիստերով, տեղի պիտի ունենան դասախօսական հանդիպումներ, Ս. Գրային սերտողութեան ու խորհրդածութեան պահեր:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 7ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ Ս. Պատարագ: Պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգշ. Տ. Վաղինակ Վրդ. Մելոյեան:

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԸ

Ս. Վարդանանց Չօրավարաց տօնը Հինգշաբթի, 11 Փետրուարին է:

Այս առիթով, Չորեքշաբթի, 10 Փետրուարի երեկոյեան ժամը 7ին, նախատօնակի արարողութիւն պիտի կատարուի Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազանին եւ մասնակցութեամբ Թեմիս հոգեւորականաց Դասուն: Իսկ Հինգշաբթի, 11 Փետրուարի առաւօտեան ժամը 10:30ին, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն

մէջ տեղի պիտի ունենայ Ս. Պատարագ: Թէ՛ նախատօնակի արարողութեան եւ թէ՛ Ս. Պատարագի աւարտին, պիտի երգուին Ս. Վարդանանց տօնին յատուկ շարականներ եւ ազգային երգեր:

Կը հրաւիրենք մեր բարեպաշտ ժողովուրդը ներկայ ըլլալու այս արարողութեանց, վերանորոգուելու Ս. Ղեւոնդեանց ու Ս. Վարդանանց պատգամով ու վերահաստատելու անկէ բխող ուղիին հաւատարմութեան ուխտը:

CLERGY CONFERENCE AND SPECIAL SERVICES ON THE FEASTS OF STS. GHEVONTIANK AND STS. VARTANANK

Each year on the Feast of Sts. Ghevontiank, Prelacy clergy members gather for a one-day conference and Divine Liturgy, under the auspices and presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.

This year's conference is being hosted by St. Garabed Church and will take place on Tuesday, February 9th, 2010, at the Prelacy. The day will begin with morning services at the Prelacy Chapel, followed by the conference which will include lectures and spiritual meditations.

In the evening, clergy and faithful will gather at St. Mary's Church in Glendale for Divine Liturgy, which will be celebrated by pastor of St. Gregory Church in San Francisco Very Rev. Fr. Vaghinag Meloian. The service will begin at 7:00 p.m.

Thursday, February 11th, is the Feast of Sts. Vartanank. On the evening of Wednesday, February 10th, the Prelate will preside over eve of the feast services at St. Sarkis Church in Pasadena, starting at 7:00 p.m. The clergy order will participate in the service.

On Thursday, Vartanants, Divine Liturgy will be celebrated in all Prelacy churches starting at 10:30 a.m.